№ 214 Նոյեմբերի 17 (29) 1881 Նոյեմբերի 17 (29) № 214

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլի, կէս տարվանը 6 բուբլի։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Ուսուցչապետարանի դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
խրատանչիւր տաբին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դարձեալ մի ապացոյց,—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ խմբագրին։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Դեր. մանիա։ Նամակ Թիւրքիայից։ Արտաքին լուրեր։—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Մի նամակ նախկին ուսանողից իր ընկերոջ։

ԴԱՐՁԵԱԼ ՄԻ ԱՊԱՑՈՑՑ

—

Միջազգային հեռագրական ընկերութեան միջոցով Կ. Պոլսից մեզ հաղորդված այսօրվայ հեռագիրը դարձեալ մի նոր ապացոյց է որ Թիւրքիան պէտք ունի բարեկարգութեան։ Թիւրքաց Հայաստանում, Էրզրումի կողմ, յայտնվել է մի հիւանդութիւն որ ժանտախտին նման է։ Նոյն լուրը հաստատում է տեղական մի ռուս թերթի Բաթումի թղթակիցը։

Երբ որ մենք տարիներով կրկնել ենք որ Թիւրքիան կարօտ է վերանորոգութեան, մեր այդ խօսքերը մենք հիմնել ենք այն ճշմարտութեան վրա, որ մի երկիր պէտք է բարեկարգվի ոչ թէ միայն իր համար, բայց և իր հարևան երկիրների շահերը աչքի առաջն ունելով և մինչև անգամ ընդհանուր մարդկութեան երջանկութեան համար։

Ինչ է պատճառը որ մենք երբէք չենք լսում որ խոլէրա, կամ ժանտախտ, կամ այլ սրա նման տարտափելի ախտ յայտնվէր եւրոպական երկիրներից մինում՝ Ֆրանսիայում, Գերմանիայում, Իտալիայում և այլն, բայց այդ ցաւերը միշտ յայտնվում են մահմետական երկիրներում։ Ի՞նչ է սրա պատճառը, ասում ենք մենք։

Վարակիչ ախտերի աղբիւրը միշտ լինում է մի երկրի անտեսական անբարեկարգութիւն, մարդկանց կենսական անհոգութիւն, վարչական անտարբերութիւն, ժողովրդի անմաքուր, վատառողջ կեանքի եղանակ, ամբոխի աղքատութիւն, նրա ճնշված, տառապրած, տարկային դրութիւն, մի խօսքովյն բոլորը, որ արգելք է դնում մի ազգի ինքնագործունէութեան, ժողովրդի ազատ, բարոյապէս և նիւթապէս առողջ, բնական զարգացման։

Իսկ մահմետական երկիրները իրանց բարոյական կեանքով, իրանց մռաւոր և տնտեսական անշարժութեամբ, իրանց կառավարչական կեանքի անհոգ կազմակերպութեամբ՝ նպաստում են ժողովրդի մէջ աղքատութեան, անմաքուր կենցաղավարութեան, կեղտի զարգացմանը։

Արաբիա, Պարսկաստան, Թիւրքիա,—ահա ամեն տեսակ ախտերի, խոլէրայի, ժանտախտի մշտական աղբիւրները։ Տարին չէ անցնում որ մենք չը կարդայինք լրագիրներում թէ խոլէրան յայտնվել է Մէկկայում, ժանտախտը Բաղդադում, մի այլ ցաւ էլ Պարսկաստանի այս կամ այն քաղաքում...

Եւ Եւրոպան դեռ ևս յապաղում է հաստատամտութեամբ պահանջել որ մահմետական երկիրները վերջապէս բարեկարգվեն, չը նայելով որ շատ լաւ է հասկանում որ մի երկրի վարչական անկարգ դրութիւնը, նրա կուլտուրական ստոր աստիճանը թէ նոյն իսկ այն երկրի համար դժբաղդութիւն է, թէ նրա հարևան երկիրների և թէ ամբողջ մարդկութեան համար ամեն տեսակ վտանգներ է ներկայացնում։

Եւ դեռ գտնվում են Եւրոպայում դիպլոմատներ, որոնք տատանում են արդեօք կարելի է Թիւրքաց Հայաստանի համար ինքնավարութիւն պահանջել, առանց վիրաւորելու երկրի մահմետական ազգաբնակութիւնը, որ իբր թէ մեծամասնութիւն է կազմում Հայաստանում, չը նայելով որ հազար անգամ ճիշդ թուանշաններով ապացուցված է թէ Թիւրքաց Հայաստանում քրիստոնեայ տարրը երկրի ազգաբնակութեան խոշոր մեծամասնութիւն է կազմում։ Դեռ գտնվում են, ասում ենք, դիպլոմատներ, որոնք իրանց խելքով քաղաքագիտութիւն և գթութիւն են բանեցնում, առաջարկելով նշանակել Հայաստանում մահմետական գլխաւոր նահանգապետ։

Ասէք խնդրեմ, ի՞նչ միտք ունեն այդ տեսակ դիպլոմատներում քաղաքագիտութիւն, քաղաքական զգուշութիւններ և այդպէս անուանված խոհեմութիւններ, երբ մահմետական երկիրները իրանց անբարեկարգ դրութեամբ, իրանց անշարժութեամբ, դէպի քաղաքակրթութիւնը իրանց թշնամութեամբ՝ մշտական վտանգի աղբիւր են ներկայացնում ոչ թէ միայն իրանց հպատակ քրիստոնեայ ազգերի համար, ոչ թէ միայն հարևան երկիրների համար, բայց և ամբողջ մարդկութեան համար։ Եւրոպան յապաղում է մացնել տալ վերանորոգութիւնները, իրագործել տալ ինքնավարութիւնը Հայաստանում, լուծել, վերջապէս, հայոց խնդիրը, որ ուրիշ բան չէ, եթէ ոչ առնել անշարժ մահմետականների ձեռքից նահանգի ներքին վարչական գլխը և տալ նրան քաղաքակրթութեանը աւելի ընդունակ քրիստոնեաների ձեռքը,—իսկ այդ ժամանակ նոյն Հայաստանում, մահմետական տարրի շնորհով, ծնվում է ժանտախտը, որ սպառնում է անցնել հարևան երկիրները և այնուհետև ամբողջ Եւրոպա և հնձել անողորմաբար մարդկութեան մի երրորդ մասը....

Ապացուցված է, հազար անգամ ապացուցված է, որ Թիւրքաց Հայաստանի քրիստոնեայ ազգաբնակութիւնը անհամեմատ աւելի բազմաթիւ է, քան թէ նոյն երկրի մահմետական տարրը, բայց եթէ հակառակն էլ լինէր, եթէ քրիստոնեաները փոքրամասնութիւն էլ կազմէին, այնու ամենայնիւ, աչքի առաջն ունելով ընդհանուր մարդկութեան օգուտն ու ապահովութիւնը, Եւրոպան, քրիստոնեայ Եւրոպան, պէտք է ներքին վարչական ոյժը Թիւրքաց այլ և այլ նահանգներում առնէր անընդունակ մահմետականների ձեռքից և յանձնէր իրան կրօնակից քրիստոնեաների ձեռքը։ Մի՞թէ քրիստոնեաների պաշտպանելը արդէն յանցանք է համարվում քրիստոնեայ Եւրոպայի աչքում։

Եթէ Եւրոպան չէ կամենում պաշտպան հանդիսանալ Թիւրքաց քրիստոնեաների, նոյն իսկ յօգուտ այդ քրիստոնեաների, եթէ չէ կամենում լուծել հայոց խնդիրը նոյն իսկ Հայաստանի օգտի համար,—գոնէ շատ պէտք բարեկարգել Հայաստանը իրան համար, Եւրոպացիների համար, ստիպէր Թիւրքիային խոնարհվել քաղաքակրթութեանը ամբողջ մարդկութեան օգտի համար, որպէս զի մահմետական երկիրները վերջապէս դադարէին լուսաւորված աշխարհի համար սարսափելի վարակիչ ախտերի մշտական վտանգի աղբիւր ներկայացնել....

Ասուած չանի որ ժանտախտը, որ այժմ սպառնում է մեր կովկասեան սահմաններին, անցնի Եւրոպական քաղաքակիրթ երկիրներն էլ. բայց եթէ այդ պատահի, եթէ մահմետական երկիրներից մի գեղեցիկ օր ժանտախտը անցնի Վիէննա, Բերլին, Փարիզ, Հռոմ,—և կը հնձի նրանց ազգաբնակութիւնը—երևի միայն այն ժամանակ եւրոպան կը հասկանայ որ ժամանակ է արդէն ստիպել Թիւրքիային և Պարսկաստանին քաղաքակրթվել, ժամանակ է պարտաւորեցնել նրանց բարեկարգել իրանց քրիստոնեայ նահանգները, ժամանակ է, ուրեմն, վճռել և հայոց խնդիրը, ժամանակ է յանձնել այդ երկիրների բնիկ քրիստոնեաներին իրանց երկրի ներքին վարչութեան գլխը։

Երևի միայն այն ժամանակ երբ շքեղ Վիէննան, եւրոպական Բերլինը, միջազգային հպարտ Փարիզը և բանաստեղծական Հռոմը իրանց գոնների առջև կը տեսնեն մահմետական աշխարհի արդիւնքը, ժանտախտի հրէշը,—այն ժամանակ միայն կը հասկանան որ պէտք է վերջապէս խոնարհեցնել Թիւրքիային եւրոպական քաղաքակրթութեանը, պէտք է վճռել հայոց խնդիրը, քանի որ այս բոպէիս խեղճ Հայաստանն է, որ մահմետական կուլտուրայի շնորհով,

---

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԻ ՆԱՄԱԿ ՆԱԽԿԻՆ ՈՒՍԱՆՈՂԻՑ ԻՐ ԸՆԿԵՐՈՋ

—

Թշուառ ընկերդ դրութիւնը կամիս իմանալ։ Լսիր ուրեմն։ Լսիր ուշադրութեամբ, որովհետև իմ քաշած օրերը քեզ էլ են սպառում, եթէ միայն քաղդը մի հրաշքով քեզ չէ հրաստացրել։

Գիտում եմ քեզ մի յետ ընկած, անիծված գիւղից։ Կէս գիշեր է. սարսափելի մութ և այնպիսի մառախուղ, որ երկու քայլում ոչ ոքի չէ կարելի տեսնել։ Այս բոպէիս ամբողջ աշխարհը պարունակվում է ինձ համար իմ անշուք սենեկի մէջ,—նրանից դուրս ոչինչ չէ երևում։ Ցուրտ է, խոնաւ, անձրևի կաթիլները խփում են անդադար լուսամուտիս ապակիներին։ Ժամանակ առ ժամանակ որոտում է ամպը և նրա գոռոցը արձագանք տալիս հորիզոնի վրա բարձրացող ձիւնապատ լեռներում։ Սեղանս քաշած վառարանի մօտ, իմ անբաժան ընկեր-պլեղը գցած ուսերիս, ծխախոտ ծխախոտի յետևից քաշելովգրում եմ տողերս։ Սենեկում մենակ եմ։ Գործավարիս մօտակայ գիւղն եմ ուղարկել, իսկ ծառայիս իրաւունք եմ տուել քնելու, որ իր միակերպ տեսքով և խօսքերով ինձ չը յուսահատացնի։ Կարող ես ուրեմն երևակայել հոգեկան տրամադրութիւնս։ Որ աւելի լաւ հասկանաս այդ, ես կաւելացնեմ, որ սենեկիս կից գտնվող գոմի մէջ մօտ քսան խոզ այնպիսի տարտափելի ձվոց ու խռխռոց են բարձրացրել, որ քիչ է մնում հոգիս դուրս քաշեն տեղից... Հեռու անիրաւ, տարտափելի իրականութիւն! Հեռացրու ինձնից դաժանելի պատկերդ, թող գէթ մի բոպէ մտաւորապէս թև առնեմ ու թռչեմ այն ոսկեայ աշխարհը, ուր ապրում են ուսանողները, որից զրկվեցի ես յաւիտենապէս, որի պաշտելի պատկերը միշտ վառ կը մնայ սրտիս մէջ....

«Ի՞նչ ես անում այդ գիւղումը, թշուառականս»,—կը հարցնես դու անշուշտ։ «Դատապարտում եմ—կը լինի պատասխանս, և Ցեզարի լեգիոնայով ամենաբազդաւոր մարդն եմ, որովհետև առաջինն եմ այստեղ։ Ամբողջ օրերով գրում եմ կամ հին գործերը կարդում և միշտ բարկացած քայլում սենեկումս։ Երկու ամիս է այստեղ եմ և այդ միջոցում ես մի մարդ անգամ չեմ տեսել, որի հետ կարողանայի խօսել, ի հարկէ այս խօսքի լայն նշանակութեամբ։ Կարծես անասուններ լինեն չորս կողմումս միմիայն ֆիզիկական պահանջներով—ուտել, խմել, աշխատել ու քընել և միւս օրը դարձեալ նոյնը կրկնել։ Խօսելու, մտածելու գոնէ երգելու ընդունակութիւն էլ չունեն այս թշուառները։ Միայն լաւ ուշունց տալ գիտեն, Գաղքցուց էլ գերազանց։ Փորձելի անցեալ օրը խօսակցութիւն սկսել իմ տանտիրոջ հետ, որ մի սպիտակամազ ծերունի է, բայց այս անաքանդն էլ խօսելու տեղ մի քանի հարիւր խօսք ծամեց, տրտնջեց բերնումը ու թոքեց. ես ոչինչ չը հասկացայ։ Լսում էի երբեմն մի քանի խօսք՝ «երանալ», «էլլիկը», «զօշունը» և հասկանում էի, որ հին բաներ է պատմում իմ հարցիս ժողովրդի դրութեան մասին նա տուեց մի տարօրինակ պատասխան՝ «Խի չի, ագա, լեաւ են իրանց մնար, լօխ էլ սմաքար ուտեն, չայ են խմում»։ Ես տարանից յետոյ, ինչպէս ասում են махнулъ рукою և մի քանի բառ՝ «ժողովուրդի դրութիւնը արատայատող» հեղուկից խմացնելով նրան ճանապարհ դրի։

Կեանքս փոխվել է բոլորովին, սիրելի ընկեր։ Այն ինչ սրանից մի քանի ամիս առաջ երբ ուսանող էի, գիշերը մինչև 2 ժամը նստած ընկերական շրջանում խօսում էինք, գաղում, վիճում, երգում, խմում—այստեղ միայնութիւնից չչմռելով պարկում եմ—horribile dictu!—9 ժամին և վերկենում 5-ին «էն բաշոէն» ինչպէս ասում է ժողովուրդը։ Ուղիղ աքլորի կեանք եմ քաշում՝ նրանք «թառ» լինելիս, ես էլ եմ պարկում և նրանց առաւօտեան ուրախ ծուկլուկուի հետ ես, գիշերը մի քանի յիմար երազ տեսած, ունքերս կիտած, վեր եմ կենում և ամբողջ օրը լուռ ու մունջ պարապում։ Երբեմն միայն երգում եմ ազգաւի ձայնով այս կամ այն օպերայի կտորները, որ քիչ չէ զարմացնում իմ թուրք եսամուլին։ Դադրած ժամանակը երբեմն դուրս եմ գալիս տանից, որ մաքուր օդ ծծեմ։ Օդը իրաւ որ մաքուր է, հրաշալի, բնութիւնը սքանչելի՝ լայնատարած դաշտեր ձիւնապատ տարերով շրջապատած... Բայց ես մարդ եմ որոնում, մարդ. բնութիւնը առանց մարդի—ոչինչից էլ պակաս է։ Ի հարկէ, չէ կարելի ասել, որ այստեղ մարդ չը լինի, բայց... Լսիր։ Այն ինչ ուսանող եղած ժամանակը ամենայն մի բոպէ ականջի էր ընկնում՝ «կարդացիր այսօրուայ Голосъ-ի յօդուածը», կամ «որքան գեղեցիկ է Գամբետայի ճառը»,—այստեղ դրանց փոխարէն լսում եմ

կը դառնայ գուցէ աղբիւր ամբողջ Եւրոպայի դժբաղդութեան։

Գուցէ դա պատմական նախախնամութեան կամք է. Եւրոպան չուզեց հոգալ Հայաստանի վրա, խուլ մնաց նրա լաց ու աղաչանքին, — այժմ դարերով տանջված Հայաստանը կուղարկի շքեղ, քնքոյշ դարձած, քաղաքակիրթ Եւրոպային մի ընծայ, նրա եսականութեան, անտարբերութեան և անմարդասիրութեան փոխարէն մի հրէշ, մի աւերիչ ախտ։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Մոսկվա, 30 հոկտեմբ.

Խնդրում ենք «Մշակի» էջերում տեղ չնորհել այս մեր երկտողիս։

«Экон. Пол. Тур. Армянъ» բրոշիւրը այժմ ուղարկած է «Մշակի» խմբագրութեան՝ որը իր վրա յանձն առաւ ծախելու և տարածելու հոգսերը և նեղութիւնները։ Գնել ցանկացողներին այժմ հրաւիրում ենք դիմել «Մշակի» խմբագրութեան։ Այդ բրոշիւրը, ինչպէս յայտնի է «Մշակի» ընթերցողներին, ծախվում է յոգուա Մոսկվայի չքաւոր ուսանողներին։

Պարտք ենք համարում «Մշակի» 144 համարում տպած մեր հաշուի մի սխալը ուղղել։ Բրոշիւրը տպած է եղել՝ ոչ թէ 1500 օր., այլ միայն մի գաւօգ—1200 օր.։

Մեր խորին շնորհակալութիւնը յայտնում ենք պ. Բ. Մատինեանցին և պ. Մ. Պապաեվին՝ որոնցից առաջինը Ս. Պետերբուրգում, իսկ երկրորդը Նիժնիում այդ բրոշիւրի տարածելուն նպաստեցին։

Դր. Իւզբաշեանց, Գ. Տէր-Մովսէսեանց, Ա. Քալանթարեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 13 Նոյեմբերի

Թիֆլիսի քաղաքացի հանգուցեալ Մովսէս Միրոյիչ Միրիմանեանց 1867 թուին Հաւլաբար սուրբ Կարապետ եկեղեցւոյ ձորակին մէջ իւր ունեցած բրուտի գործատուն, այն է կուէ աման շինելոյ տեղ, կտակից լինել մշանջենաւոր կալուած Լիմ և Կոուց անապատաց։ Եւ կտակագիրն ևս իր ձեռամբ գրելով երկու արժանաւոր վկայից ստորագրել տուաւ և յիշեալ սուրբ ուխտերուն յանձնեց։

Բայց այժմ երբ ինքն իր մահկանացուն է կնքած, իրան հանարիւն եղբայրներ մեծ. Իսան և Արտեմ աղայք իրենց գերդաստանի և հանգուցեալ եղբօր յիշատակն անմահացնելու համար իրենց կողմից կրկին նուիրել փութացան զայն յիշեալ վանօրէից։

Եւ այս կը խնդրեմք, պ. խմբագիր, որ բարեհաճէք ձեր թերթին մէջ մի անկիւն չնորհել այս յօդուածոյս ի խրախոյս համօրէն ազգայնոց մերոց, որպէս զի մեր ազգայիններէն իւրաքանչիւր ոք օրինակ առնեն իրանց կարողութեան համեմատ ո և իցէ ազգային յաւաջադիմութեան և բարի նպատակի համար իրանց յաւերժական յիշատակներ թողուլ։

Լիմ անապատի գործակալ. Անանեա վարդապետ Շիրոյեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Պ. Խ. Խաչատուրեանցից ստացանք 4 ռուբլ բաժանորդագին «Journal d'Orient» լրագրի համար։ Առաջվայ 810 ռուբլ գումարի հետ անում է 814 ռուբլ։

—

Պ. Սամսոն Ապրելեանց խնդրում է մեզ յայտնել որ այրդէն սկսել է թարգմանել հայերէն լեզուով «Կոմս Օժէ դը Մոնտիոն» գրքոյկը։ Գործ Հօրեր։ Ուստի խնդրում է որ պ. պ. թարգմանիչները այլ ևս չաշխատեն թարգմանել յիշեալ գրքոյկը։

—

ՆՈՒԽՈՒՅՑ մեզ գրում են որ այդ քաղաքում յաճախ պատահում են գողութիւններ և այլ անկարգութիւններ։ Քաղաքի կարգապահութիւնը շատ թոյլ է։

—

Թիւրքաց Հայաստանից ստացված մասնաւոր նամակներից տեղեկանում ենք, որ Ադիլ-ճէվազի և Խամուր-Բերդի կողմերը ճանապարհները խիստ վտանգաւոր են, քիւրդերի աւազակութիւնների պատճառով։ Քիւրդերը բռնել են բոլոր անցքերը (կիրճերը) և կողոպտում են բոլոր անցնողներին, այնպէս որ դէպի Ռուսահայաստան ճանապարհորդները ստիպված են անցնել Դիադինի և Բայազիդի վրայով։

—

Ներսիսեան դպրոցի 5-որդ դասատան աշակերտները ստանալով Նոյեմբերի 13-ին իրանց գրադարանի համար մի օրինակ «Հրապարակախօս Զայն» Նուէր պ. Բ. Պարզսեանից, չնորհակալութիւն են յայտնում պարոնին։

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ մեզ գրում են։ «Այստեղի գիւղերում տարածված են այժմ այլ և այլ տարաբոխիկ ախտեր։ Հիւանդութեան տարածման սկզբնապատճառը ոմանք համարում են պարսկահպատակ և տաճկահպատակ բազմաթիւ տարի գերդաստանները, որոնք իրանց հայ են ձևացնում, հասարակութիւնից աւելի հեշտութեամբ ողորմութիւն ստանալու համար։ Թէ քաղաքը և թէ գաւառիս գիւղերը լի են դրանցով։ Նրանց կեղտոտ ապրուստը, կեղտոտ զգեստները, անյարմար, խոնաւ բնակարանները,—այդ բոլորը նպաստում է հիւանդութիւնների տարածվելուն։ Բացի սորանից այդ տարօրինները իրրև թափառող խմբեր, մեծ արագութեամբ տեղից տեղ փոխվելով, աւելի էլ մեծ հեշտութեամբ տարածում են ժողովրդի մէջ զանազան ախտեր։ Հրաւիրում ենք պօլիցիային ուշադրութիւն դարձնել այդ թափառականների վրա։ Զարմանալի է որ այդ տարօրինների մեծ մասը յաղթանդամ, զօրեղ մարդիկ են, բայց փորձեցէք նրանց աշխատեցնել։ Երկու անգամ աւելի փող էլ վճարելով, քան թէ այլ մշակներին,—նրանք դարձեալ չեն համաձայնվի աշխատել, նախապատուելով անդադար մուրալ։»

—

ԱԽԱԼՑԻԽԱՑԻՑ մեզ գրում են։ «Այս օրերս Ղարսի նահանգի սահմաններին մօտակայ թիւրքաց Հայաստանի մի թիւրք գիւղից եկած էին այստեղ մի խումբ մշակներ. դրանք կապալով վերցրած են Ախալցխա-Միխայլովեան խճուղու քարեր դարդելու։ Սրանց գլխաւորի հետ ծանօթանալով (անունը Սաֆար է), զարմացայ իմանալով որ դրանք բոլորն էլ հայեր են։ Զը նայելով որ հագնված են թիւրքաց չորերով, խօսում են տաճկերէն, տաճկի մօտ բոլորովին թիւրք ձևացնելով իրանց, բայց երբ հարցրի նրանց այդ տարօրինակ վարմունքի պատճառը, պատասխանեցին որ 30 տնից բաղկացած նրանց գիւղը մահմեդականութիւն ընդունած հայեր են։ «Մենք ծածուկ պաշտում ենք լուսաւորչի հաւատը, ասեցին նրանք ինձ, իմ մի քանի ընկերների ներկայութեամբ, գիտենք հայոց տօները և պաս ենք պահում, բայց վախենալով թիւրքերի մոլեռանդութենից, նրանց մօտ ձևանում ենք մահմեդական։ Եթէ մեր գիւղը մնար Ռուսաց սահմանների մէջ, մենք կը վերականգնեցնէինք մեր եկեղեցին և համարձակ կը պաշտէինք քրիստոնէութիւնը։» Ո՞ւր է մի հայոց լուսաւորչական, միսիոնարական ընկերութիւն և թնչի վրա է մոռացում էջմիածինը։

—

«Правит. Вѣстникъ» լրագրում տպված է ներքին գործերի մինիստրութեան հրաման, որով Ռուսաստանում բնակվող կարգի մանուանված ազանդին պատկանող հրէաները ճանաչվում են մնացած բոլոր ռուս հպատակներին հաւասար իրաւունքներ ունեցող քաղաքացիներ։ Կարայիմները հրէաներ են, թէ ցեղով և թէ կրօնով. այսինքն հրէական ծագումից են և մովսիսական կրօնի են պատկանում, միայն չեն ընդունում թալմուդ անուանված հրէական կրօնական գիրքը, այլ իրանց կրօնի հիմքը ճանաչում են միմիայն հին-կտակարանը։ Նրանք բազմաթիւ չեն Ռուսաստանում, շատ խաղաղասէր և աշխատող ժողովուրդ են, երբէք վաշխառութեամբ չեն պարապում, փողեր տոկոսով չեն տալիս, ոչ ոքին չեն հարստահարում և մեծ հակում ունեն դէպի տնտեսութիւնը և երկրագործութիւնը։

—

Լրագիրները հաղորդում են որ նախկին մինիստր կոմս Վալուևի գրում է այժմ մի բոման, որ շուտով կաւարտվի և կը հրատարակվի։ Երևի այդ բոմանը մեծ հետաքրքրութիւն կը շարժի ռուս հասարակութեան մէջ և սաստիկ շատ կառնվի։

—

«Вѣстникъ Европы» ամսագրի Նոյեմբերի տետրակի մէջ հրատարակված է ռուս երևելի գրող Տուրգենեվի մի փոքրիկ վէպ, կամ պատկեր «Пѣснь торжествующей любви» վերնագրով, իտալական կեանքից վերցրած։ Մենք ագահութեամբ սկսեցինք կարդալ երևելի գրողի այդ նոր վէպիկը. բայց որքան խաբված տեսանք մեզ մեր յոյսերի մէջ, երբ փոխանակ Տուրգենեվի բէալական զօրեղ գրչի, հանդիպեցինք այդ իր նոր գրուածքի մէջ միստիցիզմով լի մի աննպատակ ստեղծագործութիւն։ Երևի բոլոր ռուս նշանաւոր գրողներին վիճակված է վերջացնել իրանց գրական ասպարէզը միստիկական զզուելի ուղղութեամբ։

—

«Кавказъ» լրագրում կարդում ենք որ Նոյեմբերի վերջերում հասնելու է Թիֆլիս, մեր քաղաքում մի կամ երկու կոնցերտ տալու համար մի նշանաւոր պիանիստ (պիանոի վրա ածող) տիկին Բ է ր տ ե ն ա ս ն — Վ ա ր օ ն ե ց, որ իր երաժշտական ուսումը առել է Ս. Պետերբուրգի կոնսերվատորիումի մէջ։ Մայրաքաղաքի բոլոր լրագիրները մեծ գովասանքով խօսում են երիտասարդ տիկնոջ երաժշտական տաղանդի մասին։

—

Կիրակի, Նոյեմբերի 15-ին Թիֆլիսի Ամարյան թատրոնում հայ մշական խումբը ներկայացրեց մի կոմեդիա 2 արարուածով և երկու վոդեվիլներ։ Անտրակտում ա. Հրաչեայ կարդաց մի քանի բանաստեղծութիւններ։ Տիկին Հրաչեայ այնպէս գեղեցիկ կարդաց «Վանեցի մոր երգ» բանաստեղծութիւնը, որ շատ ոգևորեց ներկայ եղած փոքրաթիւ հասարակութեանը։

—

«Тифл. Объявл.» լրագրի թղթակիցը հեռագրում է Բաթումից Նոյեմբերի 13-ից. Տրապիզոնի մեր հիւպատոսը կիսապաշտօնական հեռագրով հաղորդում է Նահանգապետին, թէ լուր է տարածված ժանտախտի յայտնվելու մասին վրուցա գիւղում, Խոնիի մօտ, թիւրքաց երկրում։ Մեզ յայտնի է պաշտօնական աղբիւրներից, աւելացնում է «Тифл. Объявл.» լրագիրը, որ այդ լուրը ի նկատի առնելով, տեղական նահանգապետը գործադրել է ցաւի տարածման առի բոլոր միջոցները։ Հաղորդակցութիւնը մեր ցամաքային սահմաններից ընդհատված է, իսկ ծովից մի նաւին բրանդ-վախտի իրաւունքներով յանձնված է քննել մեր սահմանների մօտ եկող բոլոր նաւերը։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՐՄԱՆԻԱ

—

Եւրոպական մամուլը չը հաւատաց իշխան Բիսմարկի հրաժարականի կարելութեանը։ Գոնէ արտաքին գործերի մինիստրի պաշտօնի մէջ նա այնքան ամուր է, որ Եւրոպայի մէջ ոչ ոք չի հաւատայ, թէ Բիսմարկ կարող է այդպէս վաղաժամ հեռանալ միաք։ Եւ այդպիսի դիպուածներ ամեն օր եմ լսում։ Օրինակ։

—Ադա, թունի, էծը խի տուն եկալ չի։

—Չը։

—Զօռա!

—Փիջ։

—Ադա էծն եմ ասում, չալ էծը խի պերալ չես։

—Ես յինչ գիտեմ։

—Ըմբո?! Սըֆաթին հալա եշի, սրֆաթին։

—Եշի յինչանք քեզիդ տամ ա։

—Նահլաթ քէ չար սատանա հա! Ես եմ կենալու կլօխը տափին տամ հա։

—Դէ մի տեսնամ թէ ըսօրվայ կերած կօրիդ տաղիմիդ չարի—էլ ես յինչ ասա եմ։

—Ըռեխին եշի։ Ատա յէրա էծը։

—Ա՛յ էծը,—հենա կեալիս ա, երկալ ոնները նի կոխի աչքդ։ Դիսպու